Նոյն պահուն, 45—50 հոգի էլ, գլխաւորապէս քաղաքացիներ, հաւաքուեցին Շուշիում, կազմեցին առանձին համագումար և ընդունեցին Սուլթանովի պահանջը՝ Ղարաբաղը ճանաչել Ադրբէջանի մաս:

Երկու համագումարների բանաձևերը ներկայացուցին Սուլթանովին, որը, ի հարկէ, մնաց դժգոհ և սկսեց պատրաստուել աւելի վճռական քայլերի: Մարտի սկզբից Շուշիի երթևեկը առնուեց հսկողութեան տակ: Մարտ 4-ին հայկական թաղում տեղաւորուեցին ադրբէջանցի սպաներ: Մարտ 5-ին ցուցակագրուեցին Շուշիի հայ սպաները: Բաղուից հասան նոր զօրամասեր: Մարտ 7-ին Շուշի եկաւ ադրբէջանեան բանակի ղեկավար պրինց Մահմէդը: Մարտ 7-ին դէպի Խանծախ տանող ճանապարհի վրա սպանուեցին 5—6 հայեր: Մարտ 10-ին Եւլախ-Շուշի խճուղու վրա սպանուեցին 10 հայեր: Մարտ 10-ից Շուշի բերուեցին 150 հաջի-սամլուեցի քիւրդեր: Նոյն օրը Սուլթանովը հրամայեց գաւառի բոլոր հայ ոստիկանապետներին իրենց ձիաւորներով, մարտ 23-ին, բայրամի օրը, ներկայանալ իրեն քաղաքում: Նոյն ժամանակ, Սուլթանովը գրաւոր հրաման ուղարկեց Մուսուլմանլարի կայազօրի պետին, թէ՝ «հողի երեսից մաքրել Խծաբերդ, Տումի և Հին Թաղլար գիւղերը»:

Այս և նման դէպքերը կասկած չէին թողնում հայերի մէջ, որ Ադրբէջանը որոշել է հրով ու սրով ընկճել Ղարաբաղը: Եւ որոշեցին կանխել, իրենք նախայարձակ լինել. մարտ 22 լոյս 23-ի գիշերը Ղարաբաղում ծագեց ընդհանուր ապստամբութիւն Ադրբէջանի դէմ: Ասկերանի կիրճի գրաւումով Շուշիում և Խանքենդում մնացած թուրք զօրամասերը կտրուեցին արտաքին աշխարհից: Արիւնոտ կռիւներ տեղի ունեցան Խանքենդում, ուր սպանուեցին ապստամբների հրամանատարներ Ալեքսան-Դային, սպայ Լալայեանը և ուրիշներ: Շուշին մատնուեց թուրք խուժանի և զօրքի յարձակման. հայ բնակչութեան մեծ մասը փախաւ, իսկ մօտ 3-4000 հոգի մնաց թուրքերի ձեռքը և բանտարկուեց. կանայք ենթարկուեցին գանգուածային բռնաբարութեան: Առաջնորդ Վահան եպ. գլխատուեց, և գլուխը պտտցնում էին քաղաքի փողոցներում:

Մարտ 26-ից Ադրբէջանի զօրքերը ամէն կողմից սկսեցին հակայարձակման: Մի քանի օր կատաղի կռիւներ տեղի ունեցան Ասկերանում: Ապր. 3-ին, ադրբէջանեան բանակը, 8 թնդանօթով ու բազմաթիւ գնդացիրներով անցաւ գրոհի Ասկերանի, Խաչէնի և Վարանդայի ուղղութեամբ: Օրհասական ճակատամարտում հերոսի մահով սպանուեց Ասկերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը: Թուրքերը ճեղքեցին հայկական շղթան և ամէն ինչ աւերելով՝ ապր. 4-ին մտան Շուշի ու կոտորեցին քաղաքում մնացած հայերին: Հայկական տների մեծ մասը աւարի տրուեց ու հրդեհուեց: Հայկական Շուշին նստաւ մոխիրների վրա:

Դէպքերը ցոյց տուին, որ ապստամբութիւնը կազմակերպուած էր անփորձ մարդկանց ձեռքով: Հետևանքները կարող էին լինել շատ աւելի աղէտաւոր, եթէ ապր. 13-ին Ղարաբաղ չհասնէր Դրօն իր էկսպեդիցիոն